ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷԼԻՆԱ
ՀԱՀ և ԱՄՆ UCLA համալսարանների «Տոկուն համայնք» ծրագրի համակարգող
Էլ. հասցե՝ mkhitaryan.elina.m@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i46.137

ԱՄՓՈՓՈՒՄ

Հարկադիր տեղահանումը կամ բռնագաղթը առաջացնում են ֆիզիոլոգիական և հոգեբանական սթրես, որը բացասաբար է ազդում փախստական/տեղահանված ուսումնառողների ֆիզիկական, էմոցիոնալ բարեկեցության և կրթության վրա:

Հոդվածի *նպատակն* է բացահայտել սոցիալ-մանկավարժական այն դժվարությունները, որոնց առերեսվել են փախստական/տեղահանված ուսումնառողները՝ հիմնվելով փոձառնական հետազոտության արդյունքների վրա, որն անցկացվել է շրջափակման պայմաններում 2022թ. դեկտեմբեր-2023թ. հունիս ժամանակահատվածում Արցախում (Լեռնային Ղարաբաղ):

Մեթոդներ. կիրառվել է խառը տիպի հետազոտության մեթոդը (քանակական անկետավորում, որակական հարցազրույց, ֆոկուս խմբեր, դիտարկում/դասալսում) տեղահանված ուսումնառողների, նրանց ծնողների, ինչպես նաև նրանց դասավանդող ուսուցիչների/դասախոսների հարցման համար, իսկ արդյունքները մշակվել են քննական, պատմահամեմատական վերլուծության մեթոդային համալիրով:

Հետազոտության *արդյունքները* փաստում են, որ տեղահանված և փախստական ուսումնառողների հարկադիր տեղահանումը պատճառ է կոգնիտիվ, վարքային, մոտիվացիոն-սպառողական, հաղորդակցական դժվարությունների առաջացման համար: Փախստական և տեղահանված ուսումնառողների կեսից ավելին (69,6%) կարծում է, որ տեղահանվելուց հետո սկսել են ավելի վատ սովորել, և հուզող խնդիրների թվում հարցվածները նշել են նախկին բնակության վայրի կարոտը (62%), ինչն էնդեմիկ երևույթ է: Հետաքրքիր էր, որ ծնողների մեծամասնությունը (74,2%) կարծում է, որ հենց տեղահանման պատճառով իրենց երեխաների առաջադիմությունն ուսումնական հաստատությունում նվազել է: Իսկ դասավանդող մանկավարժական կազմի բացարձակ մեծամասնությունը (72.2%) հատկանշում է տեղահանված ուսումնառողների թույլ նախաձեռնողականությունն ու պասիվությունը:

Հետազոտության *վերջնարդյունքում՝* զինված հակամարտություններից, պատերազմից փախստական/տեղահանված ուսումնառող երեխաներին բնորոշ են հոգեբանամանկավարժական խնդիրներ, որոնք ներառում են ուսումնական առարկաներ յուրացնելու դժվարություններ, նևրոտիկ հակազդումներ, ֆոբիաներ, քնի/ախորժակի, տրավմատիկ շոկով պայմանավորված վարքային խանգարումներ:

Բանալի բառեր՝ սոցիալ-մանկավարժական խնդիրներ, փախստական, տեղահանված անձ, ուսումնառող, հարմարվողականություն (ադապտացիա), պատմություն, հետազոտություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային գլոբալ գործընթացները՝ ռազմաքաղաքական բախումները, էթնիկ հակամարտությունները, ճգնաժամերը՝ պետությունների տնտեսական համակարգում, վերջին տասնամյակների ընթացքում հանգեցրել են տեղահանված անձանց և փախստականների թվի աճի, հրահրել զգալի փոխակերպումներ մարդկանց աշխարհայացքի և հոգեվիճակի, նրանց մտածելակերպի և սոցիալական վարքագծում:

Հարկադիր միգրացիայի երևույթը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որը վերջին տարիներին ստացել է հստակ արտահայտված էթնոսոցիալական և էթնոքաղաքական դետերմինանտներ:

Անդրադառնալով ՄԱԿ-ի Փախստականների Գերագույն Հանձնակատարի գրասենյակի (ՓԳՀ) «Գլոբալ միտումներ» զեկույցին՝ արձանագրվել են հիմնական վիճակագրական ցուցանիշները, որի համաձայն զգալի աճ է տեղի ունեցել փախստականների թվաքանակի մեջ՝ 2023 թվականին հատելով 117 միլիոնի շեմը՝ 2022-ի 108.4 միլիոնի համեմատ (UNHCR's report , 2022): Աճի նման միտումներն առավել քան խոսուն են, պատկերացնելու փախստականների և տեղահանված անձանց հիմնախնդրի արդիականությունը համաշխարհային և լոկալ՝ տարածաշրջանային մակարդակներում:

ՄԱԿ-ի ՓԳՀ մանդատից չօգտվող փախստականների շարքում գտնվող Արցախում ապաստանած՝ 1988-92թթ. Ադրբեջանի ԽՍՀ-ից բռնագաղթած փախստականները, ինչպես նաև 1991-94թթ, 2016թ., 2020թ. հարկադիր տեղահանվածները, լինելով refugee de facto՝ «փաստացի փախստական» կամ տեղահանված, զրկված էին իրավական կարգավիճակից բխող միջազգային երաշխիքներից (Մխիթարյան, 2021): Արդյունքում առավել ծանրացավ նրանց սոցիալական վիճակը, ադապտացիոն գործընթացները, որոնք էլ անմիջականորեն ազդեցին խոցելի խմբի ուսումնառող երեխաների կրթության և առաջադիմության վրա:

Ղարաբաղյան հակամարտության ընթացքում մի քանի անգամ հարկադիր տեղահանված, մշտական բնակության վայրից ու նախկին կենսապայմաններից քանիցս զրկված փախստականները 2022 թվականի դեկտեմբերի 12-ից հետո հայտնվել էին Ադրբեջանի կողմից բացարձակ շրջափակման պայմաններում (Ocampo, 2023), երբ Ադրբեջանական կողմը փակեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող (Եռակողմ համաձայնագիր, 2020) միակ մայրուղին: Շրջափակման ինն ամիսների (282 օր) ընթացքում, երբ միտումնավոր խաթարվել էին կենսական նշանակության ենթակառուցվածքների՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման և կապի ու հաղորդակցության բնականոն աշխատանքը (Ombutsman, 2022), լրջագույն պայմաններ էին ստեղծվել սոցիալական նախկին կապերից զրկված տեղահանվածների և հատկապես կրթական համակարգում ներառված նրանց երեխաների համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական հարց ունենալով «Հարկադիր տեղահանությունը՝ որպես տեղահանված/փախստական ուսումառողների կրթական և սոցիալ-մանկավարժական խնդիրների պատճառ»՝ հետազոտության համար կիրառվել է խառը տիպի հետազոտության մեթոդը՝ օգտագործելով ֆոկուս խմբերի, քանակական անկետավորման, որակական հարցազրույցի, դիտարկման/դասալսման մեթոդների համադրումը: Հետազոտության մեջ ընդգրկվել են 2020թ. պատերազմի հետևանքով մշտական բնակության վայրերից տեղահանված ուսումնառողներ՝ աշակերտներ և ուսանողներ, նրանց ծնողները և նրանց դասավանդող ուսուցիչներ/դասախոսներ:

Հետազոտության աշխարհագրությունն ունեցել է հետևյալ ընդգրկումը՝ Ստեփանակերտ քաղաք, Այգեստան, Խնածախ, Իվանյան, Դաշուշեն գյուղեր:

Հետազոտությունն իրականացվել է 2022 թվականի դեկտեմբերից մինչև 2023 թվականի հունիս ժամանակահատվածում՝ ֆոկուս խմբեր, դասալսումներ, քանակական հարցում, որակական հարցազրույցներ, մանկավարժահոգեբանական ինտերվենցիա ժամանակագրական հերթականությամբ[1]:

Անհրաժեշտ է նշել, որ դեռ ախտորոշիչ գործիքակազմի ընտրության և կազմման ժամանակ բախվեցինք մի շարք հարցերի. օրինակ, հենց երևույթը՝ տեղահանված ուսումնառողին «առանձնացնել» և հարցում անցկացնելը կարող էր ունենալ բարոյական՝ ինչ-որ տեղ հակաադապտացիոն ընկալում: Նման ռիսկերը բացառելու համար մենք ներգրավեցինք տեղահանված անձանց հետ աշխատանքի երկարատև փորձ ունեցող հոգեբանի, ում հետ վեր հանեցինք հետազոտության կազմակերպման նեղ մասնագիտական որոշ առանձնահատկություններ: Անհրաժեշտ էր այդ առանձնահատկություններով հարցումն ադապտացնելու հետտրավմատիկ սթրեսի փուլում (որոշ դեպքերում՝ դեռահասության պուբերտատիվ անցման մեջ) գտնվող ուսումնառողներին:

Կազմեցինք հոգեբանների, ուսուցիչների և դասախոսների առանձին ֆոկուս խմբեր՝ քննարկելով «տեղահանված ուսումնառողների/ուսումնառողների Կրթական խնդիրները» հիմնահարցը: Ֆոկուս խմբային քննարկումների շնորհիվ հետազոտության ողջ համատեքստը ստացավ համապարփակ ամբողջական ձև: Մի կողմից հղկվեցին հարցաթերթերը, մյուս կողմից որոշակի փոփոխություններ կատարվեցին դիզայնում. ամրագրվեց ծնողների հետ ֆոկուս խմբերի և դասալսումների անցկացման

[1] Նախատեսվում էր հետազոտությունն իրականացնել 2 շրջափուլով. 1-ին շրջափուլը 2022թ. դեկտեմբեր-2023թ. ապրիլ, որի ավարտից հետո կիրականացվեր մանկավարժահոգեբանական ինտերվենցիա, ապա և 2-րդ շրջափուլը՝ 2023թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Հետազոտությունը սկսվեց դեկտեմբերի 10, սակայն այն համընկավ Արցախի շրջափակման հետ, որն էլ մեծ «ուղղումներ» մտցրեց հետազոտության կառուցվածքի, ընթացքի մեջ: Որոշակի կրճատվեց 1-ին փուլի ընտրանքը, քանի որ մի կողմից դիզվառելիքի պակասը թույլ չէր տալիս հասնել նախանշված, բայց աշխարհագրորեն հեռու բնակավայրեր, մյուս կողմից էլ, էլեկտրաէներգիայի հովհարային անջատումները և Ադրբեջանի կողմից ՀՀ-Արցախ գազատարի ապօրինի բռնազավթումն ու գազի մատակարարման բացարձակ դադարեցումը (ձմռանը ջեռուցման հիմնական աղբյուրներ) խաթարում էին բնականոն դասապրոցեսը: Իսկ 2-րդ շրջափուլը՝ 2023թ. սեպտեմբեր-նոյեմբեր, բացառվեց Ադրբեջանի ռազմական ներխուժման և բռնազաղթի պատճառով:

անհրաժեշտությունը՝ վերջինիս համար պաշտոնապես ստանալով Արցախի կրթական գերատեսչության համաձայնությունը:

Խորացող շրջափակման պայմաններում տրանսպորտային և հարակից այլ խնդիրների պարագայում հետազոտությունն անցկացվեց տեղահանված 60 սովորողների՝ 30 աշակերտներ և 30 ուսանողներ (պատմության, իրավագիտության, զբոսաշրջության բաժինների), 30 ծնողներ, 10 ուսուցիչ/դասախոսների շրջանում:

Հարցման որակական, թե քանակական ձևաչափում հիմնարար կարևորություն է տրվել բարոյաէթիկական նորմերին՝ պահելով գաղտնիության, կամավորության սկզբունքները: Ֆոկուս խմբերում քննարկումների ժամանակ ձևաչափով պահանջվող արձանագրման, ձայնագրման և սղագրման համար նախապես ստացել ենք գրավոր համաձայնություն բոլոր մասնակիցների կողմից՝ կրկին պահելով գաղտնիության և կամավորության սկզբունքները:

Հետազոտության արդյունքները մշակվել են հաշվի առնելով ոլորտում առկա գիտականմեթոդական ուսումնասիրություններ (Айзенбрух,1988), արտերկրում իրականացված նմանօրինակ հետազոտություններ (North & Grace MyHyun, 2023) և դրանց հրատարակված արդյունքներ (Волобуева, 2015)՝ կիրառելով քննական վերլուծության, համեմատության մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ուսումնառողների կրթական կարիքները անմիջապես կապված են նրանց ընտանիքների սոցիալական կարգավիճակի հետ: Ընտանիքը, որը ստիպված է գաղթել նոր վայր (երկիր), տուժում է կյանքի վերակազմավորման հետ կապված բազմաթիվ խնդիրներից: Նմանատիպ գործընթացով անցնում է ընտանիքի բացառապես յուրաքանչյուր անդամ, բայց ամեն մեկն իր ձևով: Արդյունքում՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար հարմարվողականության գործընթացը անհատական է: Ծնողների մեծամասնությունը զբաղված է լինում բնակության վայրի փոփոխության հետ կապված բազմաթիվ խնդիրների լուծման փորձերով՝ ի վիճակի չլինելով բավարար ժամանակ հատկացնել երեխաներին: Տեղահանված և փախստական երեխաների հիմնական մասը բռնության ականատեսներ են: Ռազմական գործողությունների կիզակետում գտնվելով՝ նրանք ստացել էին հոգեբանական տրավմաներ և ապասոցիալականացման բացասական փորձ: Փախստական և տեղահանված երեխաների անձնային հակազդումների և արձագանքների շարքում առանձնացվել են բարձր տագնապայնությունը, նյարդային վիճակը, ագրեսիա, դեպրեսիա, վախեր: Դրանք հարադրվել են սոցիալական կապերի խզմամբ, միջխմբային կոնֆլիկտներով, պասիվությամբ (և) կամ մեկուսացմամբ: Տեղահանված ուսումնառողներին դժվար էր ոչ միայն պարզապես հարմարվել շրջապատին, այլև սոցիալական դերակատարումներ կատարել՝ այդ հասարակությունում ընդունված նորմերի, ավանդույթների, կանոնների և գրված ու չգրված օրենքների հետ համաձայնեցված:

Տեղահանված ուսումնառողները կարող են համեմատաբար արագ հարմարվել նոր միջավայրին, քան մեծահասակները շնորհիվ հաղորդակցման հմտություններ ձեռք բերելու կարողության և ավելի ճկուն հոգեկանի: Նրանք նոր միջավայրը «ճանաչում են» հիմնականում իրենց հասակակիցների հետ ծանոթանալու, դպրոց և մանկապարտեզ հաճախելով անմիջական հաղորդակցական միջավայրում:

Ադապտացիոն իրավիճակում ուսումնառողները, ինչպես և ընդհանրապես մարդիկ, տարբեր կերպ են վարվում՝ ցուցաբերելով հարմարվողականության վարքագծի «ռեալպոլիտիկ» (Вебер, 1990): Ոմանք (ռացիոնալ կողմնորոշված), հարմարվողական նպատակներից ելնելով, բավականին ռացիոնալ խնդիր են դնում իրենց առջև հարմարվելու նպատակով՝ դրա համար փնտրելով և գտնելով համապատասխան միջոցներ: Երկրորդ տիպի ներկայացուցիչները (արժեքային ուղղվածություն) կառուցում են հարմարվողական ռազմավարություն՝ հիմնված իրենց արժեքային համակարգի (օրինակ՝ սկզբունքներ, ինչպիսիք են ազնվությունը, բարությունը, կարգուկանոնը) առավելագույն պաշտպանության սկզբունքի վրա (պահպանում, խնայողություն). այս ուսումնառողների համար ցանկացած իրավիճակում վարքագծի դրսևորման ժամանակ հենց արժեքներեն են հիմնական կողմնորոշիչները:

Ուսումնառողների երրորդ տիպը (էմոցիոնալ կողմնորոշված) ադապտացիայի գործընթացում նախընտրում է հետևել իր հույզերի առաջնորդությանը: Նրանց կողմից ընդունված հարմարվողական որոշումները մեծ մասամբ ինքնաբուխ բնույթի են և թելադրված են ո՛չ ռացիոնալության սկզբունքով, ո՛չ էլ որոշակի ընդգծված արժեքների հետևելու ձգտմամբ:

Չորրորդ տիպը (ավանդապաշտներ) ամեն կերպ փորձում է պահել նախորդ կյանքը, կառչել անցյալից: Նրանք փորձում են գտնել անցյալի անկլավներ, այսինքն՝ սոցիալական այնպիսի շրջանակներ, ընկերական խմբեր՝ «հին ձևով» կյանքն ու ուսումը շարունակելու համար (Корел, 2005): Նրանց ադապտացիայի այս մեխանիզմի կորիզը՝ «մակույկի» որոնումն է, որի միջոցով հնարավոր կլինի հասնել այն խմբին, ուր առավելագույնս հնարավոր կլինի վերարատադրել ուսման նախկին միջավայրը:

Վերոհիշյալ մոտեցումների համապատասխանությունը ժամանակակից իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններին փորձել ենք վերհանել մեր հետազոտության շրջանակներում՝ ուսումնասիրելով սոցիալ-մանկավարժական ինքնատիպ յուրահատկությունները տեղահանված ուսումնառողների/ուսումնառողների շրջանում:

1. Ուսումնամանկավարժական պրոցեսը (առաջադիմություն, կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները):
2. Սոցիալ-հոգեբանական զարգացում.
   - ուսումնառող-դասավանդող, ուսումնառող-ուսումնառող համակարգերում միջանձնային հարաբերությունները,
   - ճանաչողական ոլորտ,
   - անձնային ոլորտ:

Ուսումնամանկավարժական գործընթացը հեղինակի կողմից գնահատվել է ուսուցիչներից, ուսումնառողներից և նրանց ծնողներից հավաքագրված տեղեկությունների վերլուծության հիման վրա: Սա նախանշեց ուսուցչական և ուսումնառող-ծնողական կրկնակի անկետավորման անհրաժեշտությունը, ընդ որում հարցաթերթերը պետք է լինեին ոչ ծավալուն, հակիրճ, հասանելի և ընկալելի, գնահատման մեջ հեշտ:

Այս համատեքստում դասավանդողներին առաջարկվել է անկետա, որը վերհանում է ռեսպոնդենտների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են առաջադիմությունը, վերաբերմունքը ուսմանը, վարքը, մասնակցությունը ուսումնական հաստատության և խմբի հասարակական կյանքին: Հարցաշարին պատասխանել են դասավանդող ուսուցչադասախոսական կազմից և դասղեկներից՝ տարբեր տարիքի և մանկավարժական ստաժով՝ ընդգրկելով դասավանդողների, որոնք աշխատել էին 1991-1994թթ. Ղարաբաղյան Առաջին պատերազմի ժամանակ փախստական երեխաների հետ:

Կրկնակի ուսումնառող-ծնողական անկետավորումն ընդգրկում էր երկու հարցաթերթեր՝ ծնողների և ուսումնառողների համար: Կրկնակի հարցաթերթի կիրառման հիմնական նպատակն էր, որ այս հարցումների արդյունքում հնարավորինս համապարփակ տեղեկություններ հավաքագրվեն ռեսպոնդենտների մասին: Ծնողների անկետան հնարավորություն ընձեռեց լրացնել ընդհանուր պատկերը պակասող տվյալներով: Նաև՝ դպրոցահասակ հարցվողները ոչ միշտ են կարողանում օբյեկտիվ գանահատել իրավիճակը:

Ծնողների համար նախատեսված հարցաթերթը բաղկացած էր 15 հարցերից, հիմնական ռեսոնդենտներինը՝ ուսումնառողներինը 11 հարցերից, իսկ ուսուցիչներինը՝ 12 հարցերից:

Հետաքրքիր է, որ դասավանդողների հիմնական մասը՝ 55.6%-ը գտնում էին, որ ուսումնառողները բավարար վերաբերմունք ունեն ուսման հանդեպ, իսկ 22.2%-ը տոկոսը նշում է դպրոցականների անբավարար վերաբերմունքը ուսումնական գործընթացի նկատմամբ: Ուսուցման նկատմամբ բացասական վերաբերմունքի պատճառները դասավանդողները տեսնում են ծուլության մեջ (16.7%), ինչպես նաև հարցվողների տարբեր բնույթի խնդիրների մեջ՝ նյութական, հոգեբանական, մանկավարժական, սոցիալական (94.4%): Պատանիների՝ ուսանողների և դեռահասների շրջանում (66.7%) այս խնդրի առանձնահատուկ պատճառներից մեկը համարում են ուսման վարձերի փոխհատուցման հատուկ ծրագրերի առկայություն-բացակայությունը, այստեղ հետաքրիրն այն է, որ ռեսպոնդենտների մի մասը ուսման վարձի փոխհատուցման ծրագիրը համարում է մոտիվացնող, մյուս մասը, ընդհակառակը, ապամոտիվացնող՝ «եթե պետությունը փոխհատուցում է կարիք չկա ջանալու լավ սովորել»: Խնդիրների մի մասը դասավանդողները կապում են այլ մասնագետների՝ հոգեթերապևտների, հոգեբանների, մանկության սոցիալական աշխատողների, իրավաբանների հետ սերտ համագործակցության բացակայության հետ: Տեղահանված ուսումնառողների մոտ ուսման մեջ խնդիրների մյուս հիմնական պատճառը հարցվողները (83.3%) համարում են ծնողների կողմից ուսումնառող երեխաների խնդիրների նկատմամբ պատշաճ ուշադրության

բացակայությունն է, քանի որ նրանք զբաղված են նոր բնակության վայրում հիմնավորվելու խնդիրներով, իսկ շրջափակման պայմաններում՝ կենսական անհրաժեշտության մթերքների հայթայթմամբ: Ինչ վերաբերում է ընդհանուր առմամբ կրթական գործունեության կազմակերպման թերություններին (կրթական ծրագրերի դժվարություններ, դասագրքերի և անհրաժեշտ գրականության անբավարար քանակություն, մեթոդական և դիդակտիկ օժանդակ միջոցներ և այլն), ապա դրանք նշել են աշակերտների շրջանում 1.5%-ը, իսկ ուսանողների մոտ՝ 7%-ը, քանի որ պետությունն անում էր ամեն ինչ ապահովելու տեղահանված ուսումնառողներին կրթական անհրաժեշտով:

Դասավանդողների 27.8% նշում են ուսումնառողների մոտ նկատված կոգնիտիվ՝ ճանաչողական գործընթացների թույլ զարգացումը, 61,1%-ը առաջադիմության անկման պատճառ են համարում վարքագծի շեղումները: Վարքագծի շեղումների շարքում ուսուցիչները նշում են նևրոտիկ դրսևորումների դեպքեր (16,7%), դասերից բացակայություններ՝ ոչ հիվանդության պատճառով (44,4%), ագրեսիա (11.1%), անհավասարակշռություն (33,3%): Դասավանդողները տեսնում են ուսումնառողների վարքագծի շեղումների պատճառները նաև «հետպատերազմյան ողջ կյանքի իրականության մեջ» (գաղափարական անկում, ինքնության կորուստ, ընտանեկան հարաբերությունները, սոցիալական մեդիայի և լրատվամիջոցների ազդեցությունը) և թե՛ հարկադիր տեղահանությունը (սոցիալական բռնության փորձը, որը կրել են հարցվողներ, նոր բնակության վայրում հասակակիցների երբեմն հանդիպող բացասական վերաբերմունքը և այլն):

Վերլուծելով դասավանդողների կարծիքները դասարանի և դպրոցի սոցիալական կյանքում տեղահանված ուսումնառողների մասնակցության վերաբերյալ՝ պետք է նշել, որ ուսուցիչների մեծ մասը (72.2%) նշում է տեղահանված ուսումնառողների թույլ նախաձեռնողականությունն ու պասիվությունը, սակայն մյուս մասը մատնանշում է իրենց փորձառության մեջ տեղահանված ուսումնառողների ակտիվ դիրքորոշման և որոշ դեպքերում աննախադեպ նախաձեռնողականության մասին. օրինակ, գյուղական գրադարանի համար գրքերի հավաքման պրոցեսը ամբողջությամբ կազմակերպել է տեղահանված 7-րդ դասարանցի աղջիկը, ուսանողների շրջանում կային՝ կուրսի ավագի և ՈՒԳԸ-ների անդամ դառնալու ընդգծված հավակնորդություն:



Հարկ է նշել, որ հարցվող տեղահանված ուսումնառողների տարիքի հետ փոփոխություններ են նկատվել հարցաշարի հարցերի ըմբռնման մեջ, ինչը պայմանավորված էր միջին դպրոցի աշակերտների ինքնագնահատականի դժվարություններով, և հակառակը ավագ դպրոցի աշակերտների և ուսանողների մոտ բարձր ռեֆլեքսիայի, ինքնավերլուծության, ինքնաքննադատանքի

աճով: Նշենք նաև, որ ուսումնառողների կեսից ավելին (69,6%) կարծում է, որ տեղահանվելուց հետո սկսել են ավելի վատ սովորել, մնացածները (30,4%) կարծում են, որ դպրոցում իրենց ցուցանիշները նույնն են մնացել:

Հարկադիր տեղահանման հետևանքով հոգեկան առողջության փոփոխությունները նշվել են հարցվողների միայն 31.5%, մասնավորապես՝ դպրոց գնալու դժկամության ի հայտ գալը (28,1%), տրամադրության ընդհանուր անկումը և պասիվությունը (20,2%), քնի խանգարումը (19.1%), ուսումնառողների 14.6%-ը կարծում է, որ իրենց հոգեկան առողջության մեջ փոփոխություններ չեն եղել, իսկ մնացածները (53.9%) դժվարանում են պատասխանել այս հարցին:

Նոր բնակավայրում առկա խնդիրների թվում հարցվածները նշել են հետևյալը՝ նախկին բնակության վայրի կարոտը (62%), սոցիալական նիստուկացին անտեղյակությունը (2%), ծնողների ուշադրության պակասը (30%), ընկերների պակաս (5%), դասարանի բացասական տրամադրվածություն (1%):



Ծնողները փոքր-ինչ այլ կերպ են տեսնում իրենց ուսումնառող երեխաների խնդիրները: Ծնողների մեծամասնությունը (74,2%) կարծում է, որ իրենց երեխաների առաջադիմությունն ուսումնական հաստատությունում նվազել է տեղահանումից հետո, իսկ մնացածները չեն նշում կատարողականի որևէ փոփոխություն: Նաև ծնողների զգալի մասը (77,5%) նշում է իրենց երեխաների հոգեկան առողջության մեջ կատարված փոփոխությունները՝

- նևրոզների առաջացում 29.2%
- քնի խանգարում 58.4%
- ագրեսիվություն 16.9%
- տագնապայնություն 70.8%
- անհավասարակշռություն 51.6%
- հուզականություն 57,3%
- դպրոց գնալու դժկամություն 21,3%

Միաժամանակ նշում են մարսողական օրգանների (7.9%) և միզասեռական համակարգի (4.5%) սոմատիկ խանգարումների ի հայտ գալը:

Հնարավոր պատճառների շարքում, որոնք հանգեցրել են իրենց ուսումնառող երեխաների հոգեկան առողջության փոփոխության, ներառյալ ակադեմիական առաջադիմության անկումը, ծնողները հիմնականում նշում են.

- ուսումնառող երեխայի կրած դաժանության և բռնության տեսարանները պատերազմի և տեղահանության ընթացքում 65,1%



- մերձավոր ազգականների կորուստը 13.4%
- ընտանիքի նյութական վիճակի վատթարացում 41,5%
- իրենց՝ ծնողների ուշադրության պակասը 32,6%
- ընկերների պակաս 7,7%:

Այսպիսով, մեր հետազոտության արդյունքում ակնհայտ է, որ հարկադիր տեղահանված ուսումնառողների մոտ խնդիրները համակարգային բնույթ ունեն՝ տնտղելով անհատականության բոլոր ոլորտները՝ կոգնիտիվ, վարքային, մոտիվացիոն-սպառողական, հաղորդակցական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ զինված հակամարտությունների և պատերազմների հետևանքով տուժած, տեղահանված ուսումնառողների մոտ շատ տարածված են ուսումնառության գործընթացի ամբողջական ընկալման խաթարումներ, և որ սոցիալ-ժողովրդագրական գործոնները ոչ միայն ազդում են, այլև կարող են մեծացնել սոցիալ-մանկավարժական և կրթական ճգնաժամը փախստական և տեղահանված ուսումնառողների շրջանում:

Հետազոտության արդյունքում ուսումնառողների վերհանված սոցիալ-մանկավարժական բնութագրերը ցույց են տալիս, որ հարկադիր տեղահանումը, բռնագաղթը միանշանակ բարդացնում են ԱՆՁ-ի լիարժեք զարգացումը: Սա թույլ է տալիս անել հետևյալ կարևոր եզրակացությունը. «միջէթնիկական (ռազմական) հակամարտություններում տուժած մանկահասակ բնակչության համար անհրաժեշտ է մշակել անհատականության զարգացումը շտկելու միջոցառումներ՝ ուղղված նորմալ կենսապայմանների ստեղծմանը, հոգեկան առողջության ամրապնդմանը և անձի արդյունավետ զարգացմանը:

Այս արդյունքները կարևորում են կրթական բնույթի աջակցող միջամտությունների իրականացումը հակամարտություններից և պատերազմներից տուժած ուսումնառողներին,

հատկապես ում ընտանիքներում պատերազմի պատճառով կորուստ են ունեցել, ծնողները ամուսնալուծված են կամ մայրն այրիացած, ապրում են փոքր ընտանիքներում կամ տնային տնտեսություններում և ունեն ցածր կրթական ցենզ:

Ուղերձ 1. Փախստական և տեղահանված ուսումնառողների շրջանում շատ տարածված են կրթական հետադիմության «ախտանիշները»:

Ուղերձ 2. Անհրաժեշտ է հետևողական և «ոչ սովորական» կրթական միջամտություններ իրականացնել կոնֆլիկտներից տուժած ուսումնառողների համար:

Ուղերձ 3. Հոգեսոցիալական կապերի խաթարման և կրթամանկավարժական խնդիրների հիմնարար չափաբաժինը նախկին բնակության վայրի կարոտն է: Այս կատեգորիայի հիմնարար ուսումնասիրման անհրաժեշտություն է առաջանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Եռակողմ համաձայնագիր. (2020). *Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, կետ 6, էջ 1.* Получено из https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Haytararutyun-.pdf.

Մխիթարյան Է. Մ. (2021). Փախստականների իրավական կարգավիճակը Արցախի Հանարապետությունում. *Գիտական Արցախ, 8*(1), 102-103.

Айзенбрух М. (1988). Психическое здоровье беженцев-детей и их культурное развитие. *Международное миграционное ревю, 22*, 282-300.

Вебер М. (1990). *Избранные произведения*. Москва: Прогресс.

Волобуева Н. А. (2015). *К вопросу о социокультурной адаптации детей и подростков из семей беженцев и вынужденных переселенцев*. Москва.

Корел Л. (2005). *Социология адаптации: вопросы теории, методологии и методики*. Новосибирск: Наука.

North C., & Grace MyHyun K. (2023). School Inclusion of Refugee Students: Recent Trends From International Data. *Educational Researcher, 52*(4), 206–218. doi:10.3102/0013189X221149396

Ocampo, L. (2023). *Expert Opinion: Genocide against Armenians in 2023*. New York.

Ombutsman R. o. (2022). *Interim Report On The Violations Of Human Rights Of Artsakh People As A Result Of The Deliberate Disruption Of Critical Infrastructure In The Midst Of The Blockade Of Artsakh By Azerbaijan Since December 12,*. Получено из https://artsakhombuds.am/en/document/987

UNHCR's report (2022). *UNHCR's Global Trends report 2022*. Получено из https://www.unhcr.org/global-trends-report-2022.

REFERENCE LIST

Trekhstoronnee soglashenie. (2020). Zayavlenie Prem'er-ministra Respubliki Armeniya, Prezidenta Azerbajdzhanskoj Respubliki i Prezidenta Rossijskoj Federacii *(Statement by the Prime Minister of the Republic of Armenia, the President of the Azerbaijan Republic and the President of the Russian Federation)*, punkt 6, str. 1. Istochnik: https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/ Hajtararutyun-pdf.

Mhitaryan E. M. (2021). Pravovoj status bezhencev v Respublike Arcah *(Legal status of refugees in the Republic of Artsakh)*. Nauchnyj Arcah, 8(1), 102-103.

Ajzenbruh M. (1988). Psihicheskoe zdorov'e bezhencev-detej i ih kul'turnoe razvitie. Mezhdunarodnoe migracionnoe revyu, 22, 282-300.

Veber M. (1990). Izbrannye proizvedeniya. Moskva: Progress.

Volobueva N. A. (2015). K voprosu o sociokul'turnoj adaptacii detej i podrostkov iz semej bezhencev i vynuzhdennyh pereselencev. Moskva.

Korel L. (2005). Sociologiya adaptacii: voprosy teorii, metodologii i metodiki. Novosibirsk: Nauka.

North C., & Grace MyHyun K. (2023). School Inclusion of Refugee Students: Recent Trends From International Data. *Educational Researcher, 52*(4), 206–218. doi:10.3102/0013189X221149396

Ocampo, L. (2023). *Expert Opinion: Genocide against Armenians in 2023*. New York.

Ombutsman R. o. (2022). *Interim Report On The Violations Of Human Rights Of Artsakh People As A Result Of The Deliberate Disruption Of Critical Infrastructure In The Midst Of The Blockade Of Artsakh By Azerbaijan Since December 12,*. Получено из https://artsakhombuds.am/en/document/987

UNHCR's report (2022). *UNHCR's Global Trends report 2022*. Получено из https://www.unhcr.org/global-trends-report-2022.

ABSTRACT

SOCIAL AND PEDAGOGICAL PROBLEMS OF REFUGEE/IDP STUDENTS UNDER BLOCKADE

MKHITARYAN E.

Forced displacement or forced migration causes physiological and psychological stress that negatively impacts the physical, emotional well-being and education of refugee/IDP students.

The purpose of the article is to identify the socio-pedagogical difficulties faced by refugee/IDP students. The research was conducted under blockade conditions from December 2022 to June 2023 in Artsakh (Nagorno-Karabakh).

Methods: A mixed-type research method was used (quantitative survey, qualitative interview, focus groups, observation) among refugee/IDP students, their parents, as well as their teachers, and the results were processed using expert research, historical, comparative analysis.

The results of the study confirm that forced displacement is the main cause of cognitive, behavioral, motivational, consumer, and communicative difficulties among forcibly displaced students. 69.6% of refugee/IDP students believe that after forced displacement they began to study worse, and among the problems that trouble them, respondents noted longing and nostalgia for home (62%), which is an endemic phenomenon. Interestingly, the majority of parents (74.2%) believe that their children's school performance has declined due to displacement. And the absolute majority of teachers (72.2%) characterize the weak initiative and passivity of refugee/IDP students. They have psycho-pedagogical problems: learning difficulties, neurotic reactions, phobias, sleep/appetite disorders, and behavioral disorders due to traumatic shock.

Key words: social and pedagogical problems, refugee, forced displacement, student, adaptation, research.

РЕЗЮМЕ

СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УЧАЩИХСЯ БЕЖЕНЦЕВ/ВПЛ В УСЛОВИЯХ БЛОКАДЫ

МХИТАРЯН Э.

Вынужденное перемещение или вынужденная миграция вызывают физиологический и психологический стресс, который негативно влияет на физическое, эмоциональное благополучие и образование учащихся беженцев/ВПЛ.

Цель статьи - в основе результатов исследования выявить социально-педагогические трудности, с которыми сталкиваются учащиеся беженцы/ВПЛ.

Исследования было проведено в условиях блокады в период с декабря 2022 года по июнь 2023 года в Арцахе (Нагорном Карабах).

Методы: Во время исследования применялся метод смешанного типа исследования (количественное анкетирование, качественное интервью, фокус-группы, наблюдение) среди учащихся беженцев/ВПЛ, их родителей, а также обучающих их преподавателей, а результаты были обработаны с использованием методов экспертно-исследовательского, историко-сравнительного анализа.

Результаты исследования подтверждают, что вынужденное перемещение является основной причиной возникновения когнитивных, поведенческих, мативационно-потребительских, коммуникативных трудностей у вынужденно перемещенных учащихся. 69.6% учащихся беженцев/ВПЛ считают, что после вынужденного перемещения они стали учиться хуже, а среди тревожащих их проблем респонденты отметили тоску, ностальгию по дому (62%), которая является эндемичным явлением. Интересно, что большинство родителей (74,2%) считают, что успеваемость их детей в школе снизилась из-за перемещения. А абсолютное большинство преподавателей (72,2%) характеризует слабую инициативность и пассивность учащихся беженцев/ВПЛ.

Заключение: учащиеся дети беженцы/ВПЛ, пострадавшие от вооруженных конфликтов, имеют психолого-педагогические проблемы, к которым относятся трудности в обучении, невротические реакции, фобии, расстройства сна/аппетита, нарушения поведения вследствие травматического шока.

Ключевые слова: социально-педагогические проблемы, беженец, вынужденное переселение, учащийся, адаптация, исследование.